



ՄԵՐ ԱԹՈՌԱՆԻՍ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՄԱՍԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՏԱՍԽՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒՆ ՓՈՔՐԻԿ ՄԱՏՈՒՌԷՆ
ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԵՒ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ

ԴԷՊԻ ՀՈՅԱԿԵՐՏ, ԵՐԿՆԱՍԼԱՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԸ

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ՍՐՏԻՆ ՄԷՋ

«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻԶ-Ս. ԵՂԻԱ»
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԱԹՈՌԱՆԻՍ ԵԿԵՂԵՑԻ
ՊԷՅՐՈՒԹ

ԽՈՒՔԱԶ ԳԵՐԴԱՍՏԱՆԻՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՓՈՔՐԻԿ ՄԱՏՈՒՌԸ

- Տասնիններորդ դարուն կեսին, հայ կաթողիկե համայնքը աստիճանաբար կը կազմակերպուէր Խուրազ գերդաստանին պատկանող ընտանեկան փոքրիկ մատուռին շուրջ: Մեր ժողովրդապետութեան պատկանող շատ ընտանիքներ կը գործէին կամ կը բնակէին այս մատուռին շրջակայքը:
- «Խուրազ»-ի մատուռը, որ գրեթէ հարիւր տարուան պատմութիւն ունէր, ստեպ կը կարօտէր նորոգութեան՝ այլեւս անկարող ընդունելու բազմաթիւ հաւատացեալները:
- Անհրաժեշտ էր ապահովել փոխարինումն ու անցումը պաշտամունքի ընտանեկան փոքրիկ այս վայրէն դէպի աւելի մեծ եւ արժանավայել աղօթատուն մը, որ կարենար համախմբել աճող համայնքն ու աւելի նշանակալի դիրքն ունենալ Պէրուքի կենդրոնին մէջ:



1952-1959

ՓՈՔՐԻԿ ՄԱՏՈՒՌԸ ՓՈԽԱՐԻՆԵԼ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԱԻԵԼԻ ՄԵԾ ՎԱՅՐՈՎ

- Ն.Ա.Գ.Տ.Տ. Գարտինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաճանեան Կաթողիկոս-Պատրիարքը (1895-1971) կազմեց յանձնախումբ մը, որպէսզի պատրաստէ այս անցումը:
- Խուրբագ ընտանիքը նուիրեց հողատարածքը:
- Հայ կաթողիկէ Փասքալ Փապուճեան (1912-1992) հռչակեալ գիտնական-ճարտարապետին պատրաստած յատակագիծերը վաւերացուեցան 1952-ին: Փոքրիկ մատուռին քանդումն ու շինարարական աշխատանքներուն սկսումը հրամայական էին: Առաջին հիմնաքարը դրուեցաւ չորս տարի ետք, 1956-ին:
- Մեր օրերուն դժուար է պատկերացնել այդ տարիներուն շինարարական աշխատանքները Պէյրութի կենդրոնին մրջիններու նման խճողուած ամէնօրեայ երթեւեկին ու աղմկալի միջավայրին մէջ (հսկայածաւալ քարերու եւ ասաղձ նիւթերու փոխադրութիւնը, արհեստաւորներու եւ փայտագործներու հեւքը, ժայռաքարերու քանդակներ, եւայլն): Բոլորը կը գործէին կողք-կողքի՝ տախտակաշէն լաստակ-փայտամածներուն վրայ ու տակ՝ Փապուճեան եւ Խուրբագ ճարտարագէտներու ղեկավարութեամբ:



ՆՈՐԱՇԷՆ ԵԿԵՂԵՑԻՒՆ ԲԱՑՈՒՄԸ

- Այս մեծ ճարտարապետական ծրագիրը զարգացավ աւելի քան եօթ տարուան ընթացքին՝ յիսունական թուականներուն յատուկ արուեստագիտական միջոցներով, եւ այն՝ քաղաքի մը մէջ, որ կը վկայէր յաճախակի քաղաքական, ընկերային, տնտեսական եւ այլ յեղաշրջումներու:
- Յիսունականներէն մեզի կտակուած ժամանակակից ոճով վեհաշուք «Սպիտակ Տաճար»-ին այժմեականութեան նշաններէն են անոր մէջ գտնուող սրահներն ու բեմը:
- Արդիւնքը բացառիկ էր. մասնաւոր հայկական ճարտարապետութիւնը կը սլանար լուսափայլ ճերմակ քարերուն ընտրութեամբ: Եկեղեցին կը յատկանշուէր միաժամանակ աւանդական, այժմեական եւ ուրոյն համադրումով: Մայրաքաղաքին սրտին մէջ՝ ան դէպի երկինք կը վերանար Աստուծոյ անունը փառաւորելու եւ հաւատացեալներուն ծառայելու համար:
- 1959-ին, առանց սպասելու շինարարական աշխատանքներու աւարտին, Ամենպտ. Աղաճանեան Կաթողիկոս-Պատրիարքը որոշեց նորաշէն եկեղեցիին բացումը կատարել հանդիսաւոր կերպով՝ ներկայութեամբ Լիբանանի Հանրապետութեան Նախագահին՝ Ն. Վ. Ֆուատ Շեհապ Զօրավարին, երկրին եկեղեցական ու քաղաքական բազմաթիւ մեծանուն անձնաւորութիւններու:





1959-1975

ԵԿԵՂԵՑԻՒՆ ՓԱՌՔԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԷՆ...



- Լիբանանի յառաջդիմության եւ բարգաւաճումին գեղափառ ժամանակաշրջանին՝ եօթանասունականներուն, «Ս. Գրիգոր Լուսաւորիչ-Ս. Եղիա» արժողանիստ եկեղեցին կը հիւրընկալէր հոգեւոր-կրօնական, համայնքային ու մշակութային կարեւոր ձեռնարկներ:
- Հոյակերտ տաճարին ճարտարապետութիւնն արդէն իսկ աչքառու էր մայրաքաղաքին մէջ, որ այն ատեն կ'ուղղուէր դէպի արդիականութիւնն ու քաղաքաշինութեան նորարարութիւնը:

● 1975-1991

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐՈՒՆ ՀՐԱՇԱԶԱՆ ԿԵՐՊՈՎ ԱՆՎՆԱՍ ՊԱՀՊԱՆՈՒԱԾ ԵԿԵՂԵՑԻՆ

- 1975-1991 քաղաքացիական աւելի քան տասնվեց տարիներու պատերազմը մոլեգնած՝ բաժնեց մայրաքաղաքը երկու հատուածի: Սահմանագծային տարածքը, որ «կանաչ գիծ» կը կոչուէր այնտեղ աճած խոտերու պատճառով, կը սահմանակցէր եկեղեցիին: Յաջորդաբար ծառայած հոգեւորականներու հիմնական նպատակն էր պաշտպանել եկեղեցին կոիւնտերու ընթացքին մայրաքաղաքին կենդրոնին մէջ՝ միաժամանակ փորձելով կապը պահել հաւատացեալներուն հետ, որոնք ստիպուած էին տեղափոխուիլ քաղաքէն դուրս կամ արտասահման:
- Թէպէտ եկեղեցիին մերձակայքը եւ, ընդհանրապէս, Պէյրութի կենդրոնն ենթարկուեցան զանգուածային աւերածութեան, բայց եւ այնպէս ինքնին՝ եկեղեցին հրաշքով համեմատաբար անվնաս մնաց քաղաքացիական պատերազմէն:
- Միաժամանակ, ամբողջ հակամարտութեան ընթացքին, մեր համայնքը կրցաւ գոյատեւել՝ դրական եւ չեզոք յարաբերութիւններ պահպանելով պատերազմող տարբեր կողմերու հետ:



ԵԿԵՂԵՑԻՆ ՎԵՐԱՊՐԱԾ՝ ՅՈՅԺ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԷՐ ԼԻԲԱՆԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՀԵՏ


- **1992 թուականին սկսեալ**, երբ քաղաքացիական պատերազմը հասաւ իր աւարտին, որոշ վերանորոգումներ ու բարեկարգումներ կատարուեցան եկեղեցին գործածելի դարձնելու եւ հաւատացեալները վերընդունելու համար: Այս խաղաղութեան շրջանին՝ եկեղեցին ապրեցաւ հովուական կեանքի աճում ու մշակութային աշխուժացում:
- **2005-ին**, «Փետրուար 14»-ի եւ «Մարտ 14»-ի ժողովրդային շարժումներու ընթացքին, հաւաքուեցան հարիւր հազարաւոր ցուցարարներ Պէյրութի կենդրոնին լայնատարած հրապարակներուն վրայ՝ պահանջելով անկախ, ինքնուրոյն եւ արդար Լիբանանը: Մեր հոգեւորականներուն ջանքերուն եւ իմաստութեան շնորհիւ՝ ցուցարարներէն շատեր հանգիստ կ'ընէին եկեղեցիին սրահներուն մէջ, որոնք տրամադրուած էին Լիբանանի «Կարմիր Խաչ»-ի նախօգնութեան կենդրոնին գործունէութեան համար:
- **2006-ին**, հազարաւոր վրաններ լարուեցան կենդրոնին մէջ՝ ամիսներու տևողութեամբ: Փողոցները փակուեցան եւ ցուցարարներու հսկողութեան ենթարկուեցան: Վաճառատուները, ճաշարաններն ու շէնքերու մուտքերը գոցուեցան յատուկ երկաթէ դռներով: Եկեղեցին, սակայն, իր դռները բաց կը պահէր եւ կը մնար հիւրասէր ու հոգատար ժողովուրդին հանդէպ շնորհիւ մեր կղերականներուն մշտական ներկայութեան, որոնք նոյն ատեն ապահովութեան խնամք կը տանէին:
- **2019-ին**, եկեղեցին շարունակեց իր կարեւոր օգնութիւնը Նոյեմբերի մեծ հանրահաւաքներու ժամանակ, երբ կը պահանջուէր նոր կառավարութիւն մը ի սպաս բոլոր քաղաքացիներուն, առանց խտրութիւն ընելու:
- **4 Օգոստոս 2020-ին**, եկեղեցին վկայ եղաւ մայրաքաղաքին ապրած ամենավատ աղէտներէն մէկուն՝ Պէյրութի նաւահանգիստին համարեալ աղումային պայթումին, որ աւերեց կենդրոնն ու քաղաքամերձ շրջանները՝ խլելով հարիւրաւոր անմեղ կեանքեր եւ վիրաւորելով հազարաւորներ: Աղէտի ծանրութեան առջեւ, մեր ժողովրդապետութիւնն անմիջապէս գործի լծուեցաւ՝ անտեսելով փշրուած դռներն ու պատուհանները, կոտրած ապակիներն ու կահոյքները եւ ունենալով որպէս առաջնահերթութիւն՝ փրկել վիրաւոր անձերը: Պատերը, վերանորոգութենէն առաջ, կնային սպասել արտակարգ իրավիճակի աւարտին :



Ներկայ ժամանակներուն

ՀՈԳԵԻՈՐ ՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՌՈՒԶԵՌ

- Լիբանանի քաղաքացիներուն եւ օտարերկրացիներուն հետ փոխանակումի ու բացուածքի նպատակով՝ մեր ժողովրդապետութիւնը կազմակերպեց եւ կը շարունակէ կազմակերպել տարբեր մշակութային ձեռնարկներ, որոնք կը հետաքրքրեն ու կը հրապուրեն հանրութիւնը:
- Բացի կրօնական եւ հովուական ձեռնարկներէն՝ համալիրի սրահները, բեմը եւ եկեղեցին կը հիւրընկալեն դասական ու արդի երաժշտութեան համերգներ, ցուցահանդէսներ, մրցոյթներ, կատակերգութիւններ, համաժողովներ եւ բանխօսութիւններ:
- Այս միջոցառումները լոյսի տակ կը դնեն տաղանդներ, ինչպէս նաեւ կ'արժարձեն հասարակական խնդիրներ՝ նպատակդրելով յեղաշրջել որոշ մտածելակերպեր ու մտայնութիւններ, ինչպէս նաեւ ծանօթացնել Լիբանանի արդի պատմութիւնն ու մեծ դէմքերը, մեր ծննդավայրին ու շրջակայքին հայութեան պատմութիւնը:





2024-2025

ԵԿԵՂԵՑԻՆ ԿԸ ՆՇԷ ԻՐ 65 ԱՄԵԱԿԸ



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ - Ս. ԵՂԻԱ
ԱԹՈՈՒԱՆԻՍ ԵԿԵՂԵՑԻ

كاتدرائيّة الأرمن الكاثوليك

القديسين غريغوريوس المنور والياس النبي

CATHEDRALE ARMENIENNE CATHOLIQUE
ST. GREGOIRE L'ILLUMINATEUR - ST. ELIE

- **2024-ին**, կազմակերպուած ձեռնարկները որպէս նիւթ ունէին եկեղեցիին 65-ամեայ յոբելեանը:
- Եկեղեցին գրանցուեցաւ Լիբանանի կրօնական վայրերու պաշտօնական գրօսաշրջիկային ցանկին մէջ:
- **2024-ի Սեպտեմբերին**, եկեղեցին հիւրընկալեց լուսահոգի Գարսինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաճանեանի մարմինը, որ մահացած էր Հոռմ, 1971-ին:
- **2025-ին**, իբր կարգախօս որոշուեցաւ Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաճանեան Կաթողիկոս-Պատրիարքին բնաբանը. «Խաղաղութիւն եւ Արդարութիւն»:





ԽՃԱՆԿԱՐՆԵՐ ԵՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐ

- Աւագ խորանին խճանկարը, որ կը ներկայացնէ Յիսուսի յարութիւնը ոսկերանգին վրայ՝ շրջապատուած Ս. Գրիգոր Լուսաւորիչէն եւ Ս. Եղիա Մարգարէյէն, գծուած է հայ կաթողիկէ Արիել Աճեմեանի (1904-1963) եւ իրականացուած իտալացի մոզայիկագործ Բերլենտիսի կողմէ:
- Աւագ խորանէն վար երկու կողմնակի մատուռներուն մոզայիկները նուիրուած են Մարիամ Ս. Կոյսին եւ Ս. Յովսէփին:
- Դուրսի կողմնակի մուտքին մոզայիկները կը ներկայացնեն Ս. Գրիգորը (աջ) եւ Ս. Եղիան (ձախ):
- Կենդրոնական գմբէթին վրայ տեղադրուած մոզայիկը կը պատկերէ չորս աւետարանիչները:





ԵԿԵՂԵՑԻՈՅ ԳԱՆՁԵՐԸ (2)

ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ ԵՒ ՍՐԲԱԶԱՆ ՄԱՍՈՒՆՔ

- Մուտքի ձախ կողմը կը կանգնի եկեղեցիին հիմնադիր Գարտինալ Գրիգոր-Պետրոս ԺԵ. Աղաճանեան Կաթողիկոս-Պատրիարքին պրոնգէ կիսանդրին (գործ՝ Մ. Մազմանեանի), որ տեղադրեցաւ 1996-ին, անոր ծննդեան հարիւրամեայ տարեդարձին առիթով:
- Աւագ խորանին Տապանակին վրայ կայ Ս. Գրիգոր Լուսաւորիչին մասունքը, զոր 2001-ին նուիրեց Ս. Յովհաննէս-Պօղոս Բ. Պապը:
- Մուտքի աջ կողմը՝ վարշամակի հազուագիւտ պատճեններէն մէկը կայ, որ շփուած է հարազատ վարշամակին հետ: Ասիկա զետեղուեցաւ 2010-ին:





ԵԿԵՂԵՑԻՒՆ ԳԱՆՁԵՐԸ (3)

ԳԱՐՏԻՆԱԼ ԱՂԱՃԱՆԵԱՆԻ ՆՈՒԻՐԱԿԱՆ ՄԱՏՈՒՌԸ

Մուտքի ձախ կողմը կայ մատուռը, ուր կը հանգչի Գարտինալ Աղաճանեանի մարմինը: Մոզայիկը, զոր պատրաստեց Հ. Եղիա Վրդ. Սատեր, նուիրուեցաւ բարերարներու կողմէ՝ որպէս յարգանքի տուրքն Աստուծոյ Ծառային մարմնին Լիբանան վերադարձին, որ տեղի ունեցաւ 12 Սեպտեմբեր 2024-ին:

